

2000 թվական

- **Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտին առնչվող օրենսդրական իրավական, մեթոդական, տեղեկատվական և վերլուծական նյութերի շտեմարանի ստեղծում**

Սկիզբ է դրվել տեղեկատվության հավաքագրմանը, համակարգմանը, վերլուծություններին, դրանց հիման վրա եզրակացությունների և բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտի զարգացման ուղղություններով առաջարկությունների մշակմանը:

- **Հայաստանում, բնակարանային ոլորտում 1989-2000թթ-ին ընթացող զարգացումների ուսումնասիրություններ**

Իրականացվել են հետևյալ ուսումնասիրությունները.

- բնակարանային ոլորտի զարգացումների վրա ՀՀ օրենսդրության և ՀՀ Կառավարության որոշումների ազդեցությունները.
- բազմաբնակարան շենքերի կառավարման նոր համակարգի ներդրումը Հայաստանում 1995-2000թթ.
- «Համատիրություն» համակարգի ներդրման խոչընդոտները Գյումրի քաղաքում

- **Գործընկերային կապերի ստեղծում Հայաստանում բնակարանային ոլորտում գործող կառույցների հետ:**

Ստեղծվել են գործընկերային կապեր բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում գործող հասարակական, պետական և միջազգային կազմակերպությունների հետ: